ԳՈՒԼՊԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Կուլպան կörծրմ ըն հինգ ճաղէրի օգնությամբ նույն տեխնիկայով, որը սովորական է մյուս գավառներում և Մերձավոր արևելքում: Նախշերը դուրս են բերում 5—6 ռանգի թելերով և չունեն այն նրբությունն ու գեղարվեստական բարձր ճաշակը, որ հատուկ է Վանա և Կարնո հարսանեկան գուլպաներին: Նախշերը կամ սոսկ պարզ գծեր են կամ երկրաչափական միավորումներ, ծաղիկներ շատ սակավ են պատահում, կենդանիների ոճավորումն ավելի հազվադեպ է:

Գործած կուլպան դալիբ ըն քաշրմ կամ տամ՝ կաղապարին են հագցնում, որի երկու կեսերը հավասար չեն. ավելի երկարը տղամարդու գուլպայի համար է, կարճը՝ կնոջ: Դալիբնէրը քանդակափորագրությամբ չեն զարդարված, ինչպես, օրինակ, Լոռում, որտեղ փայտեղեն իրերը գրեթե միշտ փորագրվում էին: Դալիբի վրա քաշած գուլպան կրակի վրա խանձ ըն տալրմ ավելորդ. դուրս ցցված մազերն այրելով, երկու երեսն էլ՝ դրսինն էլ, միջինն էլ:

ԳՈՐԳԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Գաբանէրը՝ գորգերն ու կարպետնէրը, մաֆրաշնէրը, խուրջիննէրը, շվալնէրը, խարարնէրը, մուրաֆայի երեսները, բղամսակնէրը և այլ նման իրերը գործում էին տորֆի[120] կամ հանայի[121] վրա: Սա ներկայացնում է նույն քառանկյունի շրջանակը, որը տարածված էր Ղարաբաղում, Գանձակում, Ղազախում, Լոռում, ինչպես և առհասարակ բոլոր գորգագործ գավառներում և որը կազմված էր աջ և ձախ կողմից 4—6 սմ հաստություն և 10—12 սմ լայնություն ունեցող նեղ յանէրավ՝ տախտակներով, իսկ վերև և ներքև այդ տախտակների մեջ բացված ծակերի միջով հորիզոնական անցնող կլորացրած ձողերով՝ նէտէրավ: Ամբողջ սարքավորումը և նրա առանձին մասերը, թե գործածած գործիքներն ու տեխնիկան, ինչպես դա տեղի էր ունենում Շուշում և ընդհանրապես Ղարաբաղում մանրամասն նկարագրել է Շուշվա քաղաքային դպրոցի ուսուցիչ Յակով Զեդգենիձեն[122], կցելով կարևոր գծագրումներ և տալով նրանց թուրքական անունները: Զանգեզուրի տորֆը բոլորովին նույնն է, միայն թե մասերը կրում են հայկական անուններ: Այսպես՝.

Թրք. օխին կոչվում էր նէտ:

Ստորին նէտի վրա դրվող փայտը կոչվում էր ոչ թե թրք. աղրզ-չուբուխի, այլ պէրան-նրպատ, Գորիսում՝ հինիլի նրպատ:

Թրք. կուչու-աղաջի-ն՝ ասպի փէտնէր:

Վրայի ճիպոտին ասում էին ոչ թե թրք. կուչու-չուբուխի, այլ ըսպափէտին նրպատ:

Թրք. օխլու-ին՝ ասում էին տանակ:

Տալ-աղաջի-ին՝ յանաչի[123]:

---

120 Գորիս, Խնձորեսկ:

121 Ողջի (Օխչի):

122 *Я. Зедгенидзе, Салах-бек Захар-беков, Амбарцум Тер-Егиазаров,* Производство ковров и паласов (гор. Шуша). См. Промысловые занятия в некоторых населенных пунктах Закавказья, СМОМПК, вып. XI, отд. I, էջ 2—51:

123 Տե՛ս անդ: